



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԱՄՅՐ ԵՒ ԿԵՂԵՅԻ



Վարդապատ Երրորդ Կիրակի 2 ՕԳՈՍՏՈՍ 2020

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (5.1-10)

Լսեցէ՛ք սիրոյ երգը, որ ձեզի պիտի երգեմ ի դիմաց սիրականին, որ կ'երգէ իր սիրելի այգիին: «Ես, սիրականս, այգի մը առի բարեբեր բլուրի մը վրայ. ցանկով պատեցի, ձողերով պատ քաշեցի անոր շուրջը, եւ ընտիր խաղողի որթատունկ տնկեցի: Այգիին կեղերոնը աշտարակ մը կանգնեցի եւ հնձան մըն ալ փորեցի, եւ ապա սպասեցի որ ընտիր խաղող տայ, բայց միայն ազոխ տուաւ: Արդ, ով բնակիչներ Յուդայի եւ Երուսաղէմի, դո՛ւք դատեցէք իմ այգիիս խնդիրը: Ուրիշ ի՞նչ պէտք է ընէի այգիիս համար եւ չըրի, եւ ահա խաղողի փոխարէն ազոխ տուաւ ինձի: Հիմա ես ձեզի ըսեմ թէ ի՛նչ պիտի ընեմ այգիիս.– պիտի քակեմ ցանկապատը, որպէսզի գազաններուն ճարակ դառնայ, պիտի փլցնեմ պատերը, որպէսզի ոտքի կոխան ըլլայ: Խոպան պիտի ձգեմ. ո՛չ պիտի յօտեմ եւ ոչ ալ բրեմ. պիտի թողում որ փուշ ու տատասկ բուսցնէ, եւ ամպերուս պատուէր պիտի տամ որ չանձրեւեն այգիիս վրայ»:

Երկնաւոր Զօրքերու Տիրոջ այգին Իսրայէլի տունն է, իսկ անոր սիրած նոր որթատունկը՝ Յուդայի բնակիչները: Անոնցմէ իրաւունք ակնկալեց, բայց անիրաւութիւն գտաւ. արդարութիւն կամեցաւ, բայց ազազակող անարդարութիւն տեսաւ: Վա՛յ անոնց որոնք իրարու ետեւէ տուն կը գնեն, նոր կալուածներ կը բարդեն իրենց ունեցածներուն վրայ, ընկերոջ բան չձգելու համար: Միթէ առան-

ձի՞ն պիտի ապրիք աշխարհի վրայ: Այս բոլորին տեղեակ է Երկնաւոր Զօրքերու Տէրը որ այսպէս կ'ըսէ ձեզի. «Բոլոր այս մեծ ու գեղեցիկ տուները աւեր եւ անմարդաբնակ պիտի մնան, եւ ձեր հողերը արդիւնք պիտի չտան. տասը արտավար այգիէն հազիւ կարաս մը գինի պիտի ստանաք, տասը պարկ սերմանողը հազիւ մէկ պարկ պիտի ժողվէ»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (6.18-7.11)

Չէ՞ք գիտեր, թէ ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են: Քրիստոսի անդամները առնենք պոռնիկի անդամ դարձնենք: Բնա՛ւ երբեք: Չէ՞ որ գիտէք թէ պոռնիկին միացողը անոր հետ մէկ մարմին կը կազմէ, որովհետեւ գրուած է. «Երկուքը մէկ մարմին պիտի ըլլան»: Նոյնպէս ալ, ով որ Տիրոջ միանայ՝ անոր հետ մէկ հոգի կ'ըլլայ: Հետեւաբար պոռնկութենէ հեռո՛ւ փախէք: Բոլոր միւս մեղքերը որ մարդ կը գործէ, իր մարմինն հետ կապ չունին. բայց պոռնկութիւն ընողը իր մարմինն դէմ կը մեղանչէ: Չէ՞ք գիտեր, որ ձեր մարմինները տաճարն են Ս. Հոգիին որ Աստուծմէ առիք եւ ձեր մէջ կը բնակի: Գիտցէք, որ դուք չէ՛ք ձեր անձերուն տէրը, այլ Աստուած, որ փրկագիտով ձեզ գնեց: Հետեւաբար այնպէ՛ս ապրեցէք, որ Աստուած փառաւորուի ձեր մամիններով:

... ձեր մարմինները տաճարն են Ս. Հոգիին որ Աստուծմէ առիք եւ ձեր մէջ կը բնակի:

Ձեր նամակին մէջ ինծի գրած էիք նաեւ այն մասին՝ թէ մարդ լաւ կ'ընէ եթէ բնաւ չհամուսնանայ: Բայց որպէսզի պոռնկութեան մէջ չիյնաք՝ ամէն մարդ իր կիներ թող ունենայ եւ ամէն կին՝ իր ամուսինը, որպէսզի կնոջ պէտքերը այրը գոհացնէ, եւ ամուսնոյն պէտքերը՝ կիներ: Որովհետեւ կիներ իր մարմինն տէրը չէ՛, այլ՝ ամուսինը. ո՛չ ալ այրը իր մարմինն տէրն է, այլ՝ կիներ: Երկար ատեն հեռու մի՛ մնաք իրարմէ: Եթէ կ'ուզէք աղօթքի նուիրուիլ, կրնաք փոխադարձ համաձայնութեամբ ժամանակ մը իրարմէ հեռու մնալ. բայց յետոյ վերադարձէք ձեր կենակցութեան, որպէսզի չըլլա՛յ որ Սատանան ձեզ փորձութեան մղէ՝ ձեր անժուժկալութենէն օգտուելով: Հրահանգ մը չէ՛ այս տուածս, այլ պարզապէս՝ ներողամիտ կեցուածք: Որովհետեւ ես պիտի ուզէի որ ամէն մարդ ալ ինծի պէս ապրէր, բայց Աստուած իւրաքանչիւրին իրեն յատուկ շնորհք մը տուած է. մէկուն՝ այսպէս ապրելու շնորհք, միւսին՝ այնպէս: Սակայն ամուսիններուն եւ այրիներուն կ'ըսեմ.՝ Աւելի լաւ կ'ընեն՝ եթէ ինծի պէս մնան. բայց եթէ չեն կրնար տուել՝ թող ամուսնանան, որովհետեւ նախընտրելի է ամուսնանալ քան թէ ցանկութեամբ եռալ: Իսկ ամուսնացած զոյգերուն հետեւեալ պատուէրը կու տամ Տիրոջ կողմէ.՝ Ոեւէ կին իր ամուսինէն թող չբաժնուի՛. իսկ եթէ բաժնուի, կա՛մ առանց ամուսնութեան թող ապրի եւ կա՛մ դարձեալ հաշտուի իր ամուսինին հետ: Նոյնպէս, ոեւէ այր իր կիներ թող չձգէ՛:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(19.3-12)

Փարիսեցիներ Յիսուսը փորձելու մտադրութեամբ մօտեցան անոր եւ հարցուցին. «Իրաւունք ունի՞ մէկը ոեւէ պատճառով իր կիներ արձակելու»: Յիսուս անոնց պատասխանեց. «Ձէ՞ք կարդացած Սուրբ Գիրքերուն մէջ, թէ Աստուած սկիզբէն արու եւ էք ստեղծեց մարդիկը եւ ըսաւ անոնց.

“Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան”: Հետեւաբար այլ-լեւ երկու չեն, այլ մէկ մարմին: Ուրեմն ոեւէ մէկը թող չբաժնէ անոնք որ Աստուած միացուց»:

Փարիսեցիները դարձեալ հարցուցին. «Հապա ինչո՞ւ Մովսէս օրէնք սահմանեց՝ բաժանման թուղթ տալ կնոջ եւ արձակել զայն»: Յիսուս պատասխանեց. «Մովսէս ձեր խստասրտութեան պատճառով ար-տօնեց արձակել ձեր կիները, սակայն ստեղծագործութեան ժամանակ արձակելու խօսք չկար: Գիտցէք նաեւ թէ ով որ իր կիներ կ'արձակէ առանց պոռնկութեան պատճառի եւ ուրիշ մը կ'առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ»:

Աշակերտները ըսին Յիսուսի. «Եթէ ամուսնութիւնը այդպէս դատապարտութեան պատճառ կրնայ ըլլալ այր մարդուն եւ կնոջ համար, աւելի լաւ է չհամուսնանալ»: Յիսուս ըսաւ. «Բայց ամէն մարդ չի կրնար առանց ամուսնութեան մնալ, այլ միայն անոնք, որոնց Աստուած կարողութիւն տուած է: Որովհետեւ մարդիկ չեն ամուսնանար այն պարագաներուն, երբ ծնունդով ներքինի են, կամ մարդոց կողմէ ներքինի եղած են եւ կամ գիրենք ներքինի դարձուցած են Աստուծոյ արքայութեան համար: Ով որ կրնայ ընդունիլ իմ հաստատումս, թող կատարէ զայն»:

ԹԵՌԹԻՎԻ ԱՆՆՈՐԴ ԹԻԲԵՐԸ
ԿՐԱՔ ԳՏԱԵԼ
www.sourphagop.net
ԿԱՅԲԷՁԻՆ ՎՐԱՅ

ՀՈԳԵՆԱԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԸ
ԱՆՍՕՐՕՐ ԿՏԱՐԵՅԷՔ ԿՐՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՅԻՅ ԴԻԿՆԱՏՈՒՄ: